ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

8 դեկտեմբերի 2016թ. թիվ 300

Վ.ԱԲՈՎՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156, 158, 159 հոդվածների, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Վ.Աբովյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վարդան Աբովյանին տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը ս/թ դեկտեմբերի 19-ից մինչև 2017 թվականի հունվարի 20-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

2. Վ.Աբովյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի բուժական գծով տեղակալ Արտակ Եդոյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 8
ք.Վանաձոր